



Հաճախորդն ապահովագրված մեքենան ենթարկվել է վթարի: Որպես ապահովադիր հանդես է եկել Հաճախորդի հայրը, իսկ վթարից հետո լիազորված վարորդի կողմից իրականացվել են պահանջվող բոլոր գործողությունները, ներկայացվել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն Ընկերությունը անհիմն ձգձգել է ապահովագրական հատուցում տալը՝ այդպիսով Հաճախորդին պատճառելով նյութական վնաս:

Ծանոթ լինելով Հաշտարարի գործունեությանը՝ Հաճախորդը դիմել է վերջինիս՝ Ընկերությունից պահանջելով իրեն հատուցել վթարի հետևանքով պատճառված վնասը:

Հաճախորդը Հաշտարարի գրասենյակ է ներկայացրել Ընկերության կողմից իր հորն ուղղված գրություն, որում նշված է, որ տրանսպորտային միջոցների ապահովագրության վկայագրում առկա ստորագրությունը չի համապատասխանում Հաճախորդի հոր՝ նախկինում Ընկերությունում կատարված ստորագրություններին, ինչպես նաև վերջինիս անձնագրում առկա ստորագրությանը: Ընկերությունը Հաճախորդի հորը առաջարկել է ներկայանալ Ընկերություն՝ ստորագրության նմուշներ տալու և ձեռագրաբանական փորձաքննություն իրականացնելու համար, քանի որ ներկայացված հայցային դիմումին ընթացք կտրվի միայն ձեռագրաբանական փորձաքննության արդյունքներն ստանալուց հետո: Դրան ի պատասխան Հաճախորդի հայրը գրել է, որ Ընկերության հետ առաջին ապահովագրական վկայագիրը կնքել և ստորագրել է ինքն անձամբ, իսկ հաջորդ տարի դրա ժամկետը երկարաձգելիս այն ստորագրել և համապատասխան վճարումներն արել է Հաճախորդը՝ Ընկերության աշխատակիցների համաձայնությամբ:

Ըստ Ընկերության դիրքորոշման՝ քանի որ ապահովագրական վկայագրում առկա չէ Հաճախորդի հոր ստորագրությունը, հետևաբար Ընկերության և նրա միջև չեն ծագել տրանսպորտային միջոցի ապահովագրության հարաբերություններ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերության գործադիր տնօրենի հրամանով հանձնարարվել է այդ վկայագրի հիման վրա վճարված գումարը հետ վերադարձնել Հաճախորդին:

Հաշտարարը, վկայակոչելով ինչպես օրենսդրական համապատասխան ակտերը, այնպես էլ Ընկերությունում գործող ներքին կանոնակարգերի դրույթները, նշել է, որ գործարքն անվավեր է օրենքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով: Հետևաբար, քանի դեռ չկա պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին դատարանի որոշում, Հաշտարարը չի կարող հիմք ընդունել Ընկերության կողմից ներկայացված փաստարկներն առ այն, որ Ընկերության և Հաճախորդի միջև առկա չէ օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագիր: Բացի այդ, Ընկերության աշխատակիցները չեն ստուգել պայմանագիրը կնքող անձի ինքնությունը՝ դրանով իսկ թույլ տալով ոչ միայն ներքին կանոնակարգի և օրենքի խախտում, այլ նաև Հաճախորդին պատճառելով գույքային վնաս՝ զրկելով հետագայում ապահովագրական դեպք տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից:

Արդյունքում Ընկերությունը, ընդունելով, որ իր (իր աշխատակցի) մեղավորության հետևանքով խախտվել է Հաճախորդի իրավունքը, որոշեց հաշտության գալ վերջինիս հետ և փոխհատուցել նրա կրած գույքային վնասը: